Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/2660/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

07 փետրվարի 2023 թվական **քաղաք Երևան**

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Հ. Ջալալյանի (այսուհետ՝ Դատարան), ուսումնասիրելով <<Ռուսատոմ Սերվիս>> բաժնետիրական ընկերության հայցադիմումն ընդդեմ <<Հայկական ատոմային էլեկտրակայան>> ՓԲ ընկերության, երրորդ անձինք՝ <<ՆՏԼ ՊՐԻԲՈՐ>> ՍՊ ընկերության, <<ԻՍՏՈԿ>> ՍՊ ընկերության և <<Երվադա>> ՍՊ ընկերության՝ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-175/22 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 13.01.2023 թվականի նիստի թիվ 3.1 արձանագրությամբ <<ՆՏԼ ՊՐԻԲՈՐ>> ՍՊ ընկերության և <<ԻՍՏՈԿ>> ՍՊ ընկերության հայտերը բավարար գնահատելու, <<ՆՏԼ ՊՐԻԲՈՐ>> ՍՊ ընկերությանը ընտրված մասնակից ճանաչելու և ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-175/22 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով պայմանագիր կնքելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու և ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-175/22 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին <<Ռուսատոմ Սերվիս>> բաժնետիրական ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին, և քննարկելով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

23.01.2023 թվականին <<Ռուսատոմ Սերվիս>> բաժնետիրական ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ <<Հայկական ատոմային էլեկտրակայան>> ՓԲ ընկերության, երրորդ անձինք՝ ООО <<НТЛ-ПРИБОР>>, ООО <<ИСТОК 34>>, <<Երվադա>> ՍՊ ընկերության՝ խնդրելով անվավեր ճանաչել ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-175/22 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 13.01.2023 թվականի նիստի թիվ 3.1 արձանագրությամբ ООО <<НТЛ-ПРИБОР>> և ООО <<ИСТОК 34>> հայտերը բավարար գնահատելու, ООО <<НТЛ-ПРИБОР>> ընտրված մասնակից ճանաչելու և ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-175/22 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով պայմանագիր կնքելու մասին որոշումները և պարտավորեցնել ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-175/22 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում <<Ռուսատոմ Սերվիս>> բաժնետիրական ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

ՀԱՍՏԻԿ ՋԱԼԱԼՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ

Հայցադիմումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում մուտքագրվել է 23.01.2023 թվականին, դատավորի աշխատակազմին հանձնվել՝ 26.01.2023 թվականին:

Դատարանի 30.01.2023 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցվորի ներկայացուցիչը, կատարելով դատարանի որոշմամբ արձանագրված համապատասխան շտկումները, հայցադիմումը կրկին ներկայացրել է դատարան, որը դատարանում մուտքագրվել է 03.02.2023 թվականին, դատավորի աշխատակազմին հանձնվել՝ 06.02.2023 թվականին:

Դատարանն, ուսումնասիրելով կրկին ներկայացված հայցադիմումը, արձանագրում է, որ այն ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան, հետևաբար, Դատարանը գտնում է, որ հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-125-րդ, 199-200-րդ, 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

<<Ռուսատոմ Սերվիս>> բաժնետիրական ընկերության հայցադիմումն ընդդեմ <<Հայկական ատոմային էլեկտրակայան>> ՓԲ ընկերության, երրորդ անձինք՝ <<ՆՏԼ ՊՐԻԲՈՐ>> ՍՊ ընկերության, <<ԻՍՏՈԿ>> ՍՊ ընկերության և <<Երվադա>> ՍՊ ընկերության՝ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-175/22 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 13.01.2023 թվականի նիստի թիվ 3.1 արձանագրությամբ <<ՆՏԼ ՊՐԻԲՈՐ>> ՍՊ ընկերության և <<ԻՍՏՈԿ>> ՍՊ ընկերության հայտերը բավարար գնահատելու, <<ՆՏԼ ՊՐԻԲՈՐ>> ՍՊ ընկերությանը ընտրված մասնակից ճանաչելու և ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-175/22 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով պայմանագիր կնքելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու և ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-175/22 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին <<Ռուսատոմ Սերվիս>> բաժնետիրական ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

Հայցադիմումը դատարանում ներկայացված համարել այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 23.01.2023 թվականը:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ.ՋԱԼԱԼՅԱՆ**

ՀԱՍՏԻԿ ՋԱԼԱԼՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ